ԿԱՐԾԻՔ

Հայկ Արայի Մկրտչյանի

«Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» ԺԲ.00.05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հետ կապված հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Քննարկվող աշխատանքի թեմայի արդիականությունը պայմանավորված է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության արդյունավետության բարձրացման և ապահովման համար համարժեք լուծումներ գտնելու անհրաժեշտությամբ:

Այս առումով քննարկվող հետազոտության թեման խիստ արդիական և հրատապ է, ինչպես քրեական իրավունքի, այնպես էլ իրավակիրառ տեսանկյունից:

Աշխատանքն ունի կուռ տրամաբանական կառուցվածք, որը պայմանավորված է հետազոտության նպատակներով ու դրված խնդիրներով:

Քննարկվող աշխատանքի առաջին գլխում հեղինակը համակարգված վերլուծության է ենթարկել անձի անվտանգության բովանդակային էությունը՝ քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի տեսանկյունից:

Աշխատանքի երկրորդ գլխում հեղինակը պատշաճ գիտական մակարդակով վերլուծության է ենթարկել անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանությանը ենթակա երկու ենթահամակարգերը՝ նյութական ու հոգևոր, այնուհետև քննարկել է դրանց քրեաիրավական պաշտպանության առանձնահատկությունները:

Աշխատանքի երրորդ գլխում հեղինակը նորովի է լուսաբանում անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտները, դրանք իրավացիորեն դիտարկելով որպես անձի անվտանգության ապահովման արդարացի, օրինական և ինքնավար քրեաիրավական պաշտպանության միջոցներ, ինչպես նաև հեղինակը ներկայացնում է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության կատարելագործման հեղինակային մոտեցումները՝ դատաիրավական բարեփոխումների

համատեքստում:

Գրախոսվող աշխատանքի բովանդակության վերլուծությունից հետևում է, որ հեղինակը պատշաճ խորությամբ է լուծել իր առջև դրված խնդիրները, իսկ հետազոտության արդյունքները գիտականորեն հիմնավորված են և տրամաբանորեն փաստարկված:

Քննարկվող աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ հեղինակը ինքնուրույն ուսումնասիրությունների և պրակտիկայի նյութերի քննական վերլուծության արդյունքների հիման վրա մշակել է ուրույն հետևություններ և առաջարկություններ, որոնք կարող են որոշակիորեն նպաստել գործող քրեական օրենսդրության բարելավման և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման խնդրում: Աշխատանքի դրական արժանիքներից է նաև այն հանգամանքը, որ այն իրենից ներկայացնում է համակարգված և ամբողջական հետազոտություն՝ «անձի անվտանգության» ապահովման և դրա քրեաիրավական պաշտպանության վերաբերյալ; Բացի դրանից հեղինակը համակողմանի վերլուծել է գործող քրեական օրենսդրությունը և իրավակիրառ պրակտիկան, ինչի արդյունքների հիման վրա մշակել է անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության միջոցների կառուցակարգերի և քրեական օրենսդրության կատարելագործման կոնկրետ առաջարկություններ, որոնք ունեն տեսական և գործնական զգալի նշանակություն:

Մեր կարծիքով գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացրած հիմնական դրույթները՝ հատկապես գործող քրեական օրենսդրության կատարելագործման առումով:

Հեղինակը լիարժեքորեն է օգտագործել մասնագիտական գրականությունը, գործող քրեական օրենսդրությունը, ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի, ինչպես նաև դատական պրակտիկայի նյութերը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ դրանում ձևակերպված հետևությունները և ստացված արդյունքները կարող են գնահատվել իբրև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների իրավական անվտանգության ապահովման հիմնախնդիրների հետազոտությունների նոր ուղղություն: Աշխատանքը կարող է տեսական հիմք ծառայել անձի իրավական անվտանգության հայեցակարգի հիմնավորման և մշակման համար: Հեղինակի առաջարկություններն ու եզրակացությունները թույլ են տալիս բազմակողմանիորեն և խորապես իմաստավորել ու

բացահայտել քրեական օրենսդրության առավելություններն ու թերությունները ժամանակակից փուլում, ինչպես նաև գնահատել անձի իրավունքների ու ազատությունների՝ իբրև քրեաիրավական պաշտպանության օբյեկտի սոցիալ-քաղաքական նշանակությունը:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը կայանում է «Քրեական իրավունք» դասընթացի և մասնագիտացված առարկաների դասավանդման ժամանակ անձի նորմատիվ-իրավական պաշտպանվածության հիմնախնդիրների ուսումնասիրության, քրեական օրենսդրության կատարելագործման և իրավակիրառ գործունեության բարելավման մեջ:

Բացի դրանից, աշխատանքը կարող է օգտակար լինել իրավակիրառ և դատական գործունեության վերաբերյալ հետագա ուսումնասիրություններ կատարողների և պրակտիկ աշխատողների համար:

Դրական գնահատելով կատարված աշխատանքը, այդուհանդերձ ունենք որոշակի նկատառումներ գրախոսվող հետազոտության վերաբերյալ, որոնք հանգում են հետևյալին.

1. Գտնում ենք, որ գրախոսվող աշխատանքի բովանդակությունը առավել շահեկան կներկայացվեր, եթե հեղինակը հստակորեն առանձնացներ հետևյալ երեք փոխկապված կատեգորիաների՝ «Անձի անվտանգություն», «Անձի իրավական անվտանգություն» և «Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանություն» բովանդակային առանձնահատկությունները, քանի որ դրանք հանդիսանում են հարակից հասկացություններ, բայց ունեն տարբեր իրավական բնութագրիչներ:

2. Հեղինակը առաջարկում է նոր քրեական օրենսգրքի նախագծի կառուցվածքում կենտրոնական տեղը հատկացնել «Անձի անվտանգության» ապահովման և պաշտպանության խնդրին: Ամենևին էլ չառարկելով այդ մոտեցմանը, այնուամենայնիվ գտնում ենք, որ բոլոր դեպքերում չի կարելի նսեմացնել կամ ստվերի տակ պահել հանրային (հասարակական) և պետական շահերի պաշտպանության խնդիրը, քանի որ գտնում ենք, որ դրանք իրենց սոցիալական նշանակությամբ բոլորովին չեն զիջում անձի անվտանգության պաշտպանության խնդրին, եթե ոչ դրանից առավել կարևոր է իր սոցիալ-քաղաքական նշանակությամբ:

Աշխատանքում տեղ են գտել նաև մասնակի բնույթի թերացումներ ու անճշտություններ, որոնք ամբողջության մեջ էական նշանակություն չունեն:

Մեր կարծիքով, վերոնշված դիտողություններն ու նկատառումները կրում են մասնակի բնույթ և չեն կարող ազդել կատարված աշխատանքի ընդհանուր դրական արժանիքների վրա:

Գտնում ենք, որ գրախոսվող աշխատանքը կատարվել է ՀՀ ԲՈԿ-ի «Կանոնակարգ»-ի պահանջներին համապատասխան:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի մենագրություններում և գիտական հոդվածներում:

Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրած մասնագիտությանը:

Սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Ելնելով վերոշարադրյալից, գտնում ենք, որ Հայկ Արայի Մկրտչյանի «Անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների համատեքստում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական և ավարտուն հետազոտություն է, որը լիովին համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման Կանոնակարգի»-ի 6-րդ և 7-րդ կետերին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Ս. Շ. Ծաղիկյան

Պրոֆեսոր Ս. Շ. Ծաղիկյանի ստորագրությունը հաստատում եմ՝ իրավագիտության 063 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավաբանական գիտությունների թեկնածու՝ Ջ. Հ. Հայրապետյան: